«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

«ՄԱՐԴՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ»

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

2023

Հավելված 1
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի
Գիտական խորհրդի
2023 թվականի ապրիլի 21-ի թիվ 54-Լ որոշման

«ՄԱՐԴՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ»
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ընթացակարգը մշակվել է հիմք ընդունելով Համաշխարհային բժշկական ասոցիացիայի կողմից մշակված Հելսինկյան դեկլարացիան

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ընթացակարգն անդրադառնում է մարդու մասնակցությամբ կյանքի գիտությունների և դրանց հետ կապված տեխնոլոգիաների կիրառմամբ հետազոտությունների էթիկական հարցերին, որոնք վերաբերում են սոցիալական, իրավական, էկոլոգիական հայեցակետերին:
2. Մարդու հետ կապված բոլոր հետազոտությունների հիմնական նպատակն է նոր գիտելիքների ձեռքբերում է և դրանց կիրառումը մարդու իսկ բարեկեցության ապահովման գործընթացում ինչպես նաև մարդու ներուժի, հնարավորությունների, հատկությունների կատարելագործումը: Սակայն այդ նպատակը երբեք չպետք է գերակայի հետազոտության առանձին սուբյեկտների իրավունքի և հետաքրքրությունների նկատմամբ:
3. Մարդու հետ կապված բոլոր հետազոտությունները բժշկական, կենսաբանական, հոգեբանական, մանկավարժական ոլորտներում պետք է անցկացվեն էթիկական նորմերի պահպանմամբ, որոնք երաշխավորում են հետազոտության բոլոր սուբյեկտների նկատմամբ հարգանքը, նրանց առողջության և իրավունքների պահպանումը:
4. Հետազոտողի պարտավորությունն է ապահովել հետազոտության սուբյեկտի կյանքի, առողջության, արժանապատվության, անձեռնմխելիության, ինքնորոշման իրավունքի պաշտպանությունը, անձնական տվյալների գաղտնիությունը:

Հետազոտության սուբյեկտների պաշտպանության պատասխանատվությունը կրում է հետազոտողը և, ոչ մի պարագայում՝ նույնիսկ գրավոր համաձայնության ժամանակ, պատասխանատվությունը չի կարող կրել հետազոտվողը:

5. Հետազոտության ընթացքում հետազոտողը պարտավոր է հաշվի առնել մարդու հետ իրականացվող հետազոտության անցկացման ազգային, միջազգային էթիկական և իրավական նորմերը, ստանդարտները: Ազգային և միջազգային էթիկական և իրավական պահանջները չպետք է նվազեցնեն կամ չեղարկեն սույն կարգով նախատեսված հետազոտության սուբյեկտի պաշտպանության նորմերը և ստանդարտները:

6. Մարդու հետ կապված հետազոտություններ իրավունք ունեն իրականացնել միայն համապատասխան կրթություն, որակավորում ունեցող անձիք:

7. Այն դեպքերում երբ հետազոտությունն ուղեկցվում է նաև մանկավարժական, բժշկական, կենսաբանական կամ հոգեբանական ներգործությամբ, բուժելու կամ անձի վիճակը շտկելու նպատակով, այն պետք է իրականացվի միայն այն աստիճանով, որքանով այն արդարացված է կանխարգելման, ախտորոշման և թերապևտիկ արժեքով:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

8. Սույն ընթացակարգը հետապնդում է հետևյալ նպատակները՝

1) միջոցառումների և սկզբունքների ունիվերսալ համալիրի ստեղծումը, որով կարող են ղեկավարվել առանձին կազմակերպությունները, ստորաբաժանումները:

2) առանձին հետազոտողների, հետազոտական խմբերի համար կողմնորոշիչների հաստատումը:

3) մարդկային արժանապատվության հարգանքը և մարդու իրավունքների պաշտպանությունը համապատասխան մարդու իրավունքների միջազգային նորմերին գիտական հետազոտությունների և դրանց արդյունքների կարևորության ընդունումը:

4) ներկա և ապագա սերունդների հետաքրքրությունների իրացման և պաշտպանության ապահովումը:

5) հետազոտական տվյալների հավաստիության և արժանահավատության ապահովումը:

3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

9. մարդկային արժանապատվության և իրավունքի պաշտպանությունը պետք է ապահովվի մարդկային արժանապատվության լիարժեք հարգանքը և ազատությունը, ինչպես նաև առանձին մարդու հետաքրքրությունները և բարեկեցությունը պետք է գերիշխեն գիտության կամ հասարակության հետաքրքրությունների նկատմամբ:

4. ՕԳՈՒՏ ԵՎ ՎՆԱՍ

10. գիտական արդյունքների զարգացման և կիրառման ընթացքում պետք է ապահովել առավելագույն օգուտ այցելուների համար և նվազագույնի հասցնել գիտական հետազոտությունների հասցրած վնասը մարդուն և հասարակությանը:

5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

11. Հետազոտությանը մասնակցելու համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ է հետազոտվողին ներկայացնել ամբողջական տվյալներ հետազոտության վերաբերյալ՝ նպատակի, պայմանների, տևողության, կիրառվող միջոցների, մեթոդների և վերջնարդյունքների, հովանավորների, որևէ կազմակերպություններին պատկանելիության և այլ նշանակալի գործոնների վերաբերյալ: Հետազոտության նպատակի և ընթացքի ներկայացնելուց հետո հետազոտվողը պետք է տա իր գրավոր համաձայնությունը հետազոտության մասնակցության վերաբերյալ:

12. Անհրաժեշտ տեղեկությունը հետազոտվողին ներկայացնելուց հետո պետք է տրված գրավոր համաձայնություն (Հավելված 1):

13. Եթե հետազոտվողը անչափահաս է, անհրաժեշտ է գրավոր համաձայնություն ստանալ ծնողներից կամ օրինական խնամակալից (Հավելված 2):

14. Եթե հետազոտությունն անցկացվում է նախադպրոցական, դպրոցական հաստատություններում, մարզադպրոցներում կամ մարզական այլ կազմակերպություններում, անհրաժեշտ է նաև տնօրինության թույլտվությունը (Հավելված 3):

15. Էթիկայի հանձնախումբը *3* օրվա ընթացքում որոշում է կայացնում թույլատրելու կամ արգելելու պլանավորված հետազոտության իրականացումը: Հետազոտությունը

ավարտելուց և տվյալները ներկայացնելուց հետո 3 օրվա ընթացքում էթիկայի հանձնախումբը որոշում է կայացնում՝ թույլատրելու կամ արգելելու հետազոտության արդյունքների հրապարակումը:

16. Յուրաքանչյուր հետազոտողի համար պետք է ձևակերպվի առանձին համաձայնագիր, կամ այն փոխարինվի մարզչի, մարզադպրոցի կամ մարզական այլ կազմակերպության կողմից տրվող միասնական համաձայնագրով:

17. Մարդու՝ որպես հետազոտության սուբյեկտի ներգրավմամբ հետազոտությունների արդյունքները հրապարակելիս անհրաժեշտ է հղում տալ գիտական հետազոտությունների էթիկայի հանձնախմբի կողմից տրված թույլտվությանը:

6. ՀԵՏԱԶՈՏՎՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

18. Հետազոտության ընթացքում պետք է պահպանվեն հետազոտվողների անձնական տվյալների գաղտնիության, ինչպես նաև անձնական կյանքի պաշտպանության բոլոր պայմանները: Հետազոտվողի անուն, ազգանունը հրապարակելիս դրանք ներկայացնել ոչ ամբողջական կամ այլ անվան տակ: Բացի դրանից՝ հետազոտվողի անձնական տվյալները ներկայացնել այն ձևաչափով, որ հնարավոր չլինի բացահայտել անձի ինքնությունը:

7. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

19. Մարդու՝ որպես սուբյեկտի մասնակցությամբ բոլոր հետազոտությունները պետք է համապատասխանեն համընդհանուր գիտական սկզբունքներին, հիմնված լինեն գիտական գրականության խորը իմացության, տեղեկության այլ աղբյուրների, այլ հետազոտությունների արդյունքների վրա:

20. Յուրաքանչյուր հետազոտության կառուցվածքը և կարգը պետք է հստակ նկարագրված և հիմնավորված լինեն հետազոտության արձանագրությունում:

21. Հետազոտության արձանագրությունը պետք է լուսաբանի հետազոտության էթիկական ասպեկտները և պարունակի տեղեկություն սույն կարգի սկզբունքների պահպանման վերաբերյալ: Արձանագրությունը պետք է պարունակի տեղեկություն

ֆինանսավորման աղբյուրների, հովանավորների մասին, ինչպես նաև այլ կազմակերպություններին պատկանելիության, հետաքրքրությունների բախման, հետազոտության նպատակի, մեթոդների և կազմակերպման վերաբերյալ (Հավելված 4):

8. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

22. Հետազոտությունը սկսելուց առաջ հետազոտության արձանագրությունը պետք է ուղարկվի գիտական էթիկայի հանձնախումբ հետազոտության նպատակը, ընթացքը, ակնկալվող արդյունքները և հնարավոր ռիսկերը և վտանգները ուսումնասիրելու համար:

23. էթիկայի հանձնախումբը պետք է լինի անաչառ և անկախ հովանավորից, հետազոտողից և կազմակերպությունից/ ստորաբաժանումից:

24. Հանձնախումբը պետք է հաշվի առնի այն երկրի օրենքները և կանոնները, որտեղ պետք է իրականացվեն հետազոտությունները, ինչպես նաև ընդունված միջազգային ստանդարտները և նորմերը: Սակայն բոլոր դեպքերում առաջնային տեղ են զբաղեցնում հետազոտվողի իրավունքները և պաշտպանության դրույթները:

25. Հանձնախումբը պետք է ունենա իրավունք իրականացնի հետազոտությունների ընթացիկ մշտադիտարկում: Հետազոտողը պարտավոր է Հանձնախմբի պահանջով ներկայացնել անհրաժեշտ տեղեկություն մշտադիտարկում անցկացնելու համար՝ համաձայնությունը հետազոտվողների կամ նրանց ծնողների ու կազմակերպությունների թեստավորման արձանագրությունները, դիտման արդյունքները և այլ փաստաթղթերը, որոնք հավաստում են հետազոտության անցկացման փաստը:

26. Հետազոտության կառուցվածքում յուրաքանչյուր փոփոխություն պետք է համաձայնեցնել հանձնախմբի հետ:

27. Հետազոտության վերջնական հաշվետվությունը նույնպես պետք է ներկայացնել հանձնախմբին, որը կպարունակի հետազոտության արդյունքները և եզրակացությունները:

9. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

28. Սույն ընթացակարգը ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի կողմից հաստման հաջորդող օրվանից :

29. Սույն ընթակարգում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Գիտական խորհրդի որոշմամբ:

Հավելված 1

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ես՝.....ս, Անուն, Ազգանուն

.....

Անձնագիր՝ սերիա, համար, բանակության հասցե

ծանոթ լինելով հետազոտության նպատակին, անցկացման պայմաններին, հովանավորներին և հետազոտությունը անցկացնող կազմակերպություններին, տալիս եմ իմ համաձայնությունը մասնակցելու տվյալ հետազոտությանը, մշակել և հրապարակել իմ անձնական տվյալները:

Համաձայնագիրը գործում է ստորագրման օրվանից մինչև հետազոտության ավարտը կամ տվյալների հրապարակումը:

Օր/ամիս/տարի *ստորագրություն*

Հավելված 2

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ես՝.....ա,

Անուն, Ազգանուն

.....

Անձնագիր՝ սերիա, համար, բնակության հասցե

ծանոթ լինելով հետազոտության նպատակին, անցկացման պայմաններին, հովանավորներին և հետազոտությունը անցկացնող կազմակերպություններին, տալիս եմ իմ համաձայնությունը տվյալ հետազոտությանը երեխայիս մասնակցելու, իր անձնական տվյալները մշակելու և հրապարակելու համար:

Երեխայի .....

Անուն, Ազգանուն

Համաձայնագիրը գործում է ստորագրման օրվանից մինչև հետազոտության ավարտը կամ տվյալների հրապարակումը:

Օր/ամիս/տարի *ստորագրություն*

Հավելված 3

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ես՝.....ա,

Անուն, Ազգանուն

.....

Անձնագիր՝ սերիա, համար

.....

աշխատանքային պաշտոնը, կազմակերպության անվանումը

ծանոթ լինելով հետազոտության նպատակին, անցկացման պայմաններին, հովանավորներին և հետազոտությունը անցկացնող կազմակերպություններին, տալիս եմ իմ համաձայնությունը տվյալ հետազոտությունը սույն կազմակերպության սաների հետ անցկացնելու համար:

Համաձայնագիրը գործում է ստորագրման օրվանից մինչև հետազոտության ավարտը կամ տվյալների հրապարակումը:

Օր/ամիս/տարի *ստորագրություն*

Հավելված 4

Հավաստագիր

Տրվում է ——————— ———————————— առ այն, որ հեղինակը/հեղինակները իրականացրել է/են ––––––––– ––––––––––––––– վերտառությամբ հոդվածի/գիտական աշխատանքի հետազոտություն:

Հետազոտությունը անցկացվել է .....(նշել քանակը) հետազոտվողների (մարդ, մարզիկ, հիվանդ և այլն) հետ: Հետազոտվողների միջին տարիքը կազմել է ...:

Հետազոտությունը իրականացվել է « ... » կազմակերպությունում՝ օգտագործելով « ... » սարքավորումները և « ... » ծրագրերը:

Հետազոտության նպատակն է « ... »:

Հետազոտության արդյունքում բացահայտվել է « ... »:

Բոլոր հետազոտվողները տվել են հետազոտությանը մասնակցելու իրենց գրավոր համաձայնությունը:

Հետազոտության ընթացքում պահպանվել են անձնական տվյալների գաղտնիությունը և գիտական հետազոտությունների էթիկայի կանոնները:

Հետազոտությունը ֆինանսավորվել է ..... կազմակերպության/ դրամաշնորհային ծրագրի կողմից: